ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 76
« 03 » ------06------- 2020թ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար
պ-րն Ս. Խլղաթյանին

Ներկայացվում է Կարճաղբյուր համայնքի 2020թ. մայիսի 26-ի թիվ 9, 10, 11, 12, 13 ավագանու որոշումները:
Առդիր՝ 6 թերթ:

Կարճաղբյուր համայնքի
ղեկավար՝ Տ.Քոչարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք. հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«26 » մայիսի 2020 թվականի N9

ՀԱՄԱՅՆՔԻ . ԲՅՈՒՋԵԻ 2020Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավար Տ. Քոչարյանը ներկայացրեց համայնքի 2020թ. բյուջեի կատարման ցուցանիշները առ. 01-04-2020թ. դրությամբ, հազար դրամ.

Հ/Հ	Եկամտատեսակ	Նախատեսված տարեկան	Նախատեսված եռամսյակ	Փաստացի	Կատարման %-ը
1.	Գույքահարկ	6220.0	1555.0	1842.8	118
2.	Հողի հարկ	3695.6	923.9	796.2	86
3.	Հողի վարձավճար	1396.8	349.2	418.2	120
4.	Տեղական տուրքեր	238.0	59.5	46.3	78
5.	Տեղական վճար	2700.0	675.0	-	-
6.	Ընդամենը սեփական եկամուտներ	14250.4	3562.6	3103.5	87
7.	Դոտացիա	58035.8	14509.0	14509.0	100
	Ընդամենը	72286.2	18071.5	17612.5	97

Արտահայտվեցին համայնքի ավագանու անդամներ՝ Հայկ Ասատրյանը,Ավթանդիլ Ավետիսյանը:

Նրանք ներկայացրեցին առաջարկություններ համայնքի 2020թ. բյուջեն ամբողջությամբ և սահմանված եռամսյակային համամասնություններով ըստ հարկատեսակների և ծախսերի հոդվածների կատարելու համար:

Որոշում

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի, 5) ենթակետի, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1)-ին ենթակետի և 84-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, համյնքի ավագանին՝

որոշում է.

1.Հաստատել համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի կողմից համայնքի ավագանուն ներկայացրած համայնքի բյուջեի 2020թ. առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ հաղորդումը:

2.Հանձնարարել գյուղապետարանի աշխատակազմին՝ ամենօրյա աշխատանքներ տանել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը սահմանված եռամսյակային համամասնություններով ըստ առանձին հարկատեսակների ապահովելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ՝

ա.Աշխատակազմի քարտուղար Ա.Գասպարյանին և առաջին կարգի մասնագետ(համակարգչային օպերատոր) Ա.Սիմոնյանին - բոլոր տեսակի տեղեկանքները տրամադրել միայն հարկային պարտականությունները կատարելու պայմանով:

բ.Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ա.Ավետիսյանին – բոլոր հարկատուներին ծանուցել հողի հարկի և վարձակալության գումարի չափի մասին, բացատրական աշխատանքներ տանել և պահանջել մարել պարտքերը ցուցաբերելով յուրաքանչյուրի նկատմամբ անհատական մոտեցում, ամբողջությամբ կամ մասամբ կատարելու հարկային պարտականությունները:

գ. Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Ղրիմյանին - օրենքով սահմանված կարգով միջոցներ ձեռնարկել խոշոր հարկային պարտքեր ունեցող և հարկային պարտականությունից խուսափող հարկատուների նկատմամբ:

Որոշումն ընդունվել է.

Կողմ (4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՎԹԱՆԴԻԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ԴԵՐԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«26 »Մայիսի 2020 թվականի N10

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ աշխատակազմի առաջատար մասնագետ Ա. Գասպարյան,արտահայտվեցին ավագանու անդամներ՝ Ա.Ավետիսյանը, Ռ. Ռուբենյանը Հ. Ասատրյանը) :

Նշեցին , որ 2020թ-ի գյուղատնտեսական աշխատանքները համայնքում ընթացել են կազմակերպված: Համայնքի հողօգտագործողներն ապահովված են ազոտական պարարտանյութով,անհրաժեշտ գյուղտեխնիկայով, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին և որակով կատարելու համար:
Համայնքին անհրաժեշտ է վարող տեխնիկա և հացահատիկի շարքացան, պակասում է բերքատու հացահատիկի և կարտոֆիլի սերմեր:Վերանորոգման կարիք ունեն համայնքի ոռոգման համակարգերը:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի և 43,49-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին

որոշում է.

Աջակցել գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլն աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը: Գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար աջակցել համայնքի հողօգտագործողներին տեխնիկայով և սերմացուների ձեռք բերելուն, կազմակերպել համայնքի ոռոգման ցանցերի շահագործումը, կատարել դրանց պահպանումն ու վերանորոգումը:

Որոշումն ընդունվել է.
Կողմ(4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«26 »Մայիսի 2020 թվականի N11

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԴԵՊՔԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ <<ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՐԿԱԴԻՐ ՊԱՐԱՊՈՒՐԴ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ մանկապարտեզի ընօրեն Ա. Թովմասյան.,արտահայտվեցին համայնքի ղեկավար Տ.Քոչարյանը, ավագանու անդամներ՝ Ա.Ավետիսյանը, Ռ. Ռուբենյանը

Նշեցին, որ կարոնավիրուսի բերովի համավարակի,հիվանդությունների վերահսկման և կանխարգելման պայմաններից ելնելով նպատակահարմար է մանկապարտեզի աշխատանքները ժամանակավորապես դադարեցնել:Քանի որ վարակը տարածվել է Գեղարքունիքի մարզում,ինչպես նաև հարակից համայնքներում, և որ գործ ունենք երեխաների հետ, ռիսկային է մանկապարտեզի աշխատանքների վերաբացումը:
Նշվեց նաև, քանի որ 2020թ մայիսից մանկապարտեզի աշխատակիցները գտնվում են հարկադիր պարապուրդում,բացի տնօրենից, հաշխապահից և բակապահից աշխատավարձերը վճարել ամսական աշխատավարձերի 2/3 –ի չափով:

ՈՐՈՇՈՒՄ

Կորոնավիրուսի բերովի համավարակի դեպքերով պայմանավորված, << Կարճաղբյուրի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատանքները չվերագործարկել և աշխատողների աշխատատավարձերը 2020թ մայիսից, անորոշ ժամկետով վճարել հաստատության տնօրենին, հաշվապահին և բակապահին-նախատեսված դրույքաչափով,իսկ մնացած աշխատողներին՝ նախատեսված դրույքաչափի 2/3 –ի չափով:

Որոշումն ընդունվել է.
Կողմ(4) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԱՐՈՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26» մայիսի 2020 թվականի N 12

ՀԱՄԱՅՆՔԻ 3-ՐԴ, 7-ՐԴ 1-ԻՆ ՆՐԲ, 19-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավար Տ. Քոչարյանի առաջարկությանը և համայնքի բյուջեի 4251- ճանապարհների պահպանում և շահագործում հոդվածից կատարել 370000 (երեք հարյուր յոթանասուն) հազար հհ դրամի ծախսեր և կնքել պայմանագիր:

Որոշումն ընդունվել է՝

Կողմ (4)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԱՍԱՏՐՅԱՆ ՀԱՅԿ		
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԹԱՆԴԻԼ		
ՌՈՒԲԵՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ		
ՄԿՐՏՉՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Կարճաղբյուր համայնք,1-ին փ. 3 շենք, հեռ.091213373
Էլ.փոստ՝ karchaghbyur.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
« 26» մայիսի 2020 թվականի N 13

ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի և 57-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝

որոշում է.

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ կատարել Կարճաղբյուրի հմայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի փոփոխություն
1.Հաստիքացուցակում սահմանել մեկ միավոր համայնքի ղեկավարի օգնականի պաշտոն և հաստատել պաշտոնային դրույքաչափը 121000 ՀՀ դրամ:
2.Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը հաստատել 150000 ՀՀ դրամ:
Որոշումն ընդունվել է՝

Կողմ-4, Դեմ-0, Ձեռնպահ-0:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ռ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

Դ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ.ՔՈՉԱՐՅԱՆ